«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը 5
4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ 10
5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ 11
6. Ներդրումներ պետական արժեթղթերում 12
7. Հատուցումների գծով ծախսեր և պարտավորություններ 12
8. Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից 13
9. Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր 13
10. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ և գործառնական ռիսկեր 13
11. Ֆինանսական ռիսկերի կառավարում 13
12. Ֆինանսական գործիքների իրական արժեք 15
13. Կապակցված կողմերի բացահայտումներ 16

EY
Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ջինծառայողների ապահովագրության» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ջինծառայողների ապահովագրության» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Հոգաբարձուների Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել , որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

EY
Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը.

Հոգաբարձուների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

18 մարտի, 2019թ.

ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

«ԷՐՆՍԹ ԵՎ ՅԱՆԳ»
«ERNST & YOUNG»
00057741

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	5	9,914,668	5,783,537
Ներդրումներ պետական արժեթղթերում	6	3,606,633	–
Ընդամենը ակտիվներ		**13,521,301**	**5,783,537**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	3,060,171	686,817
		3,060,171	**686,817**
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	397,554	91,656
		397,554	**91,656**
Ընդամենը պարտավորություններ		**3,457,725**	**778,473**
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող արժեթղթերի գծով վերագնահատման պահուստ		23,261	–
Չբաշխված շահույթ		10,040,315	5,005,064
Ընդամենը զուտ ակտիվներ		**10,063,576**	**5,005,064**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**13,521,301**	**5,783,537**

Ստորագրվել և հավանության են արժանացել տպագրության Տնօրենի կողմից:

Տնօրեն՝ Կարուժան Ավետիքյան

Գլխավոր հաշվապահ՝ Հայկանուշ Հակոբյան

18 մարտի, 2019թ.

5-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(*հազար ՀՀ դրամ*)

	Ծան.	*2018թ. հունվարի 1-ից 2018թ. դեկտեմբերի 31-ը*	*2017թ. հունվարի 13-ից 2017թ. դեկտեմբերի 31-ը*
Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	8	7,484,932	6,013,657
Տոկոսային եկամուտ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից		626,928	153,080
Տոկոսային եկամուտ պետական արժեթղթերում ներդրումներից		170,198	–
Ընդամենը եկամուտ		**8,282,058**	**6,166,737**
Հատուցումների գծով ծախսեր	7	(3,108,515)	(1,161,673)
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր	9	(122,529)	–
Այլ ծախսեր		(237)	–
Ընդամենը ծախսեր		**(3,231,281)**	**(1,161,673)**
Հաշվետու տարվա շահույթ		**5,050,777**	**5,005,064**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից զուտ օգուտ		7,006	–
Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		16,255	–
Ընդամենը հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ		**23,261**	**–**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքներ		**5,074,038**	**5,005,064**

5-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(*հազար ՀՀ դրամ*)

	Չբաշխված շահույթ	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ*	*Ընդամենը զուտ ակտիվներ*
Զուտ ակտիվներ 2017թ. հունվարի 13-ի դրությամբ	–	–	–
Հաշվետու տարվա շահույթ	5,005,064	–	5,005,064
Զուտ ակտիվներ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,005,064**	**–**	**5,005,064**
ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա (Ծան. 3)	(15,526)	–	**(15,526)**
Զուտ ակտիվների վերահաշվարկված սկզբնական մնացորդ համաձայն ՖՀՄՍ 9-ի 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,989,538**	–	**4,989,538**
Հաշվետու տարվա շահույթ	5,050,777	–	**5,050,777**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ	–	23,261	**23,261**
Զուտ ակտիվներ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,040,315**	**23,261**	**10,063,576**

5-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2018թ. հունվարի 1-ից 2018թ. դեկտեմբերի 31-ը	2017թ. հունվարի 13-ից 2017թ. դեկտեմբերի 31-ը
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	8	7,484,932	6,013,657
Տրված հատուցումներ		(429,263)	(383,200)
Այլ ծախսեր		(237)	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից		**7,055,432**	**5,630,457**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ		(9,747,679)	(6,232,185)
Ներդրումներ պետական արժեթղթերում		(3,547,671)	–
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների մարում		5,732,186	500,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		389,490	101,728
Պետական արժեթղթերում ներդրումներից ստացված ստացված տոկոսներ		118,242	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		**(7,055,432)**	**(5,630,457)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		–	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		–	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում		–	–

5-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

(*հազար ՀՀ դրամ*)

1. Գործունեության նկարագրություն

«Զինծառայողների ապահովագրության» Հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հիմնադրվել է 2017թ. հունվարի 13-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Հիմնադրամը ստեղծվել է՝ ապահովվելու զոհված զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև մարտական գործողությունների ընթացքում վիրավորված զինծառայողների սոցիալական բարօրությունը:

Հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ կենտրոնական բանկը:

Հիմնադրամը ֆինանսավորվում է Հայաստանում աշխատող յուրաքանչյուր անձի կողմից ամսական 1000 (հազար) ՀՀ դրամ փոխանցվող միջոցներից (պարտադիր վճարներ) և այլ բարերարների կողմից ստացված նվիրաբերություններից:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6 հասցեում:

Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Խորհրդի անդամները, ինչպես նաև Հիմնադրամի մյուս աշխատակիցները Հիմնադրամի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության, կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը և այդ նպատակի ապահովման համար օրենքով սահմանված գործառնությունների իրականացումը:

- Խրախուսել յուրաքանչյուրին՝ սատար կանգնել հայկական բանակի զինվորներին՝ նվիրատվություն կատարելով վերջիններիս կյանքի ապահովագրության համար:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն («ՖՀՄՍ»):

Հիմնադրամը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

(*հազար ՀՀ դրամ*)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցները և ՀՀ պետական արժեթղթերում կատարված ներդրումները, որոնք հանդիսանում են իր գործունեության անմիջական արդյունքը:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև,
- Հիմնադրամը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Հիմնադրամի շարունակվող մասնակցությանը համաձայն: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Հիմնադրամից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Իրական արժեքի չափում

Հիմնադրամն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով պահվող ֆինանսական գործիքները չափում է իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում,
- կամ հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են փոխհատուցումների գծով պարտավորություններից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

(*հազար ՀՀ դրամ*)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտներ

Պարտադիր վճարներից և նվիրաբերություններից ստացված եկամուտները հասանելի են Հիմնադրամի գործունեության ֆինանսավորման համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, պարտադիր վճարները և նվիրաբերությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են հասանելի:

Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ո՛չ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ՝ լուծարման ժամանակ:

Տոկոսային եկամուտ

Եկամուտները ճանաչվում են այն ժամանակ, երբ տոկոսները հաշվեգրվում են (օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, որն ակնկալվող ապագա դրամական մուտքերը զեղչում է ֆինանսական գործիքի ակնկալվող օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքին):

Ծախսեր

Վճարները, միջնորդավճարները և այլ ծախսերը սովորաբար ճանաչվում են հաշվեգրման եղանակով, երբ ծառայությունը համարվում է մատուցված:

Հատուցումների գծով ծախսեր

Հատուցումների գծով ծախսը ճանաչվում է հատուցման վերաբերյալ ՀՀ Պաշտպանության Նախարարության որոշումը ստանալու պահին՝ հատուցման ենթակա վճարվելիք գումարների ներկա արժեքի չափով, որը հավասար է հատուցման գծով պարտավորության իրական արժեքին: Հատուցման գծով պարտավորությունը սկզբնական ճանաչումից հետո չափվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով սկզբնական ճանաչման ժամանակ կիրառված զեղչման տոկոսադրույքը: Պարտավորության՝ ամորտիզացված արժեքով վերաչափման տարբերությունը ներառվում է հատուցման գծով ծախսերի մեջ՝ որպես ֆինանսական բաղադրիչ:

Արտարժութային գործառնություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայկական դրամով, որը Հիմնադրամի գործառնական և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են գործարքի կատարման ամսաթվի դրությամբ առկա գործառնական արժույթի փոխարժեքով: Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները:

Արտարժույթով գործարքների պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի տարբերությունները արտացոլվում են արտարժութային գործառնություններից առաջացած օգուտ կամ վնասում:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 483.75 ՀՀ դրամ (2017թ.՝ 484.1 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 553.65 ՀՀ դրամ (2017թ.՝ 580.1 ՀՀ դրամ), իսկ 1 ռուբլու համար՝ 6.97 ՀՀ դրամ (2017թ.՝ 8.4 ՀՀ դրամ):

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Հիմնադրամը առաջին անգամ կիրառել է ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը: Ստորև նկարագրված են այս նոր հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման արդյունքում փոփոխությունների բնույթն ու ազդեցությունը:

Մի շարք այլ փոփոխություններ և մեկնաբանություններ են առաջին անգամ ուժի մեջ մտել 2018թ. ընթացքում, որոնք սակայն որևէ ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Հիմնադրամը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը դեռ ուժի մեջ չի մտել:

(*հազար ՀՀ դրամ*)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը փոխարինում է ՀՀՄՍ 11 «*Կառուցման պայմանագրեր*», ՀՀՄՍ 18 «*Հասույթ*» ստանդարտներին և հարակից մեկնաբանություններին և սահմանափակ բացառությամբ վերաբերում է հաճախորդների հետ պայմանագրերից առաջացող հասույթի բոլոր տեսակներին: ՖՀՄՍ 15-ը հրապարակել է 2014թ. մայիսին և փոփոխվել 2016 թ. ապրիլին, այն սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց:

Հիմնադրամը ընդունել է ՖՀՄՍ 15 ստանդարտը փոփոխված հետընթաց մեթոդի կիրառմամբ՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը տարեսկզբի չբաշխված շահույթում 2018 թվականի հունվարի 1-ին՝ առանց վերահաշվարկելու համեմատական տեղեկատվությունը: ՖՀՄՍ 15 ստանդարտի անցման կուտակային ազդեցությունը էական ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի չբաշխված շահույթի վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39 ստանդարտին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*» 2018թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Հիմնադրամը չի վերահաշվարկել 2017 թ. համեմատական տեղեկատվությունը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում գտնվող գործիքների համար : Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացված է ըստ ՀՀՄՍ 39-ի և համեմատելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող տարբերությունները ուղղակիորեն ճանաչվել են 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում և բացահայտված են ստորև.

(*ա*) *Դասակարգում և չափում*

ՖՀՄՍ 9-ի համաձայն, բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին (SPPI), սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս չափանիշի համաձայն՝ պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում «վարկավորման հիմնական պայմաններին», ինչպիսիք են պարունակվող փոխարկման օպցիոնով գործիքները կամ առանց ռեգրեսի իրավունքի վարկերը, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: SPPI չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումը որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են.

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով.
- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով.
- այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերանայելու իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասը, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման:

(*հազար ՀՀ դրամ*)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (շարունակություն)

(*ա*) *Դասակարգում և չափում» (շարունակություն)*

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը հիմնականում մնում են անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ: Ածանցյալներ գործիքները շարունակում են չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ մնասի միջոցով:

ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջների բավարարումը էական ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի վրա: Հիմնադրամի ներդրումները բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում բավարարել են «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման» չափանիշին և շարունակել չափվել ամորտիզացված արժեքով:

(*բ*) *Արժեզրկում*

ՖՀՄՍ 9-ի կիրառումը փոխել է Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը ուղղված վարկերի արժեզրկմանը՝ փոխարինելով ՀՀՄՍ 39-ի՝ կրած կորուստների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Հիմնադրամից ճանաչել պահուստ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և երաշխիքների գծով ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) համար: Պահուստը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ: Այդ դեպքում պահուստը հիմնված է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացում ԱՎԿ-ի վրա:

Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծած արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացում ԱՎԿ-ի փոփոխության հիման վրա:

Հիմնադրամը բանկերում բացված հաշիվների և ավանդների համար պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ բացահայտվում է ստորև (գ) բաժնում:

(*գ*) *ՖՀՄՍ 9-ին անցնելու ազդեցությունը*

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ներառյալ ՀՀՄՍ 39-ի՝ կրած վարկային կորուստների մոտեցումը ՖՀՄՍ 9-ի ԱՎԿ-ով փոխարինելու ազդեցությունը:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների և ՖՀՄՍ 9-ով հաշվառված մնացորդների համադրումը հետևյալն է՝

	ՀՀՄՍ 39-ով չափումը		*Վերաչափում*		*ՖՀՄՍ 9*	
Ֆինանսական ակտիվներ	*Դաս*	*Արժեքը*	*ԱՎԿ*	*Այլ*	*Արժեքը*	*Դաս*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	5,783,537	(15,526)	–	5,768,011	Ամորտիզացված արժեք
Ընդամենը ակտիվներ		**5,783,537**	**(15,526)**	–	**5,768,011**	

(*հազար ՀՀ դրամ*)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՖՀՄՄԿ մեկնաբանություն 22՝ «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ կանխավճարի ստացման կամ փոխանցման արդյունքում առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե կանխավճարն ընդգրկում է մի քանի վճարումներ կամ մուտքեր, ապա կազմակերպությունը պետք է սահմանի փոխանցման ամսաթիվ՝ կանխավճարված փոխհատուցման յուրաքանչյուր վճարման կամ մուտքի համար: Այս մեկնաբանությունը որևէ ազդեցություն չունի Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է գնահատումներ և դատողություններ՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների որոշման համար: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն է՝

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Արժեզրկման գնահատում

2018 թվականի հունվարի 1-ից Հիմնադրամը ակտիվների արժեզրկումը գնահատում է ակնկալվող վարկային կորուստների հիման վրա: ԱՎԿ գնահատման մոդելի հիմնական տարրերը հետևյալն են.

PD	*Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
EAD	*Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
LGD	*Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ (ECL) պահուստը հիմնված է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա (LTECL), եթե ի սկզբանե վարկային ռիսկի զգալի աճ տեղի չի ունեցել, որի դեպքում պահուստը հիմնված է 12 ամսվա համար ակնկալվող վարկային կորուստների վրա: ԱՎԿ-ն հաշվարկվում է անհատական կամ խմբային հիմունքներով՝ կախված հիմքում ընկած պորտֆելի կամ ֆինանսական գործիքների բնույթից:

Հիմնադրամը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Հիմնադրամը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

(*հազար ՀՀ դրամ*)

4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

1-ին փուլ	Սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ գործիքի վարկային ռիկսը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Հիմնադրամը պահուստը ճանաչում է վարկի որձողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (LTECL) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկային առումով արժեզրկված համարվող վարկերը: Հիմնադրանը պահուստը է հաշվառում գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (LTECL) համար:
POCI:	Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեք

Հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Հիմնադրամը օգտագործում է գեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ որպես գեղչման դրույք օգտագործելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարումը եկամտաբերության տոկոսադրույքը:

5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ բանկերում ներդրված ավանդներ	8,150,000	2,550,000
Ռեպո գործարքներ	1,550,836	1,986,384
ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ	46,842	1,195,801
Տեղաբաշխված միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսներ	288,790	51,352
Հանած՝ ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստ	(121,800)	–
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	**9,914,668**	**5,783,537**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները ներկայացված են ՀՀ դրամով և առավելագույնը մինչև 543 (2017թ.՝ 185) օր մարման ժամկետով:

Ռեպո պայմանագրերի առարկա են հանդիսանում պետական արժեթղթերը՝ 1,552,145 հազ. դրամ (2017թ.՝ 1,984,500 հազ. դրամ) իրական արժեքով:

(*հազար ՀՀ դրամ*)

5. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և Ռեպո գործարքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխության վերլուծությունը 2018թ. ընթացքում ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	5,783,537	**5,783,537**
Նոր ակտիվներ	10,036,468	**10,036,468**
Մարված ակտիվներ	(5,783,537)	**(5,783,537)**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,036,468**	**10,036,468**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ-ի պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	15,526	**15,526**
Նոր ակտիվներ	121,800	**121,800**
Մարված ակտիվներ	(15,526)	**(15,526)**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**121,800**	**121,800**

6. Ներդրումներ պետական արժեթղթերում

2018թ. ընթացքում Հիմնադրամն իրականացրել է ներդրումներ ՀՀ կառավարության պետական արժեկտրոնային պարտատոմսերում: Ներդրումները պետական արժեթղթերում չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական արժեթղթերում ներդրումների իրական արժեքը կազմել է 3,606,633 հազ. դրամ (2017թ.՝ 0 դրամ), իսկ ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի ծախսը՝ 16,255 հազ. դրամ:

7. Հատուցումների գծով ծախսեր և պարտավորություններ

Հատուցումների գծով ծախսը բաղկացած է հատուցման գծով պարտավորությունների՝ սկզբնական ճանաչման պահին ճանաչված իրական արժեքից (2018թ.՝ 3,012,242 հազ. դրամ, 2017թ.՝ 1,094,123 հազ.դրամ) և դրանց՝ ամորտիզացված արժեքով վերաչափման արդյունքում առաջացող ֆինանսական բաղադրիչից (2018թ.՝ 96,273 հազ. դրամ, 2017թ.՝ 67,550 հազ.դրամ):

Հատուցումների գծով պարտավորության ամորտիզացված արժեքը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 3,457,725 հազ. դրամ (2017թ.՝ 778,473 հազ. դրամ):

(*հազար ՀՀ դրամ*)

8. Եկամուտներ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից

Նվիրաբերություններից ստացվող եկամուտները ներառում են.

	2018թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը	*2017թ. հունվարի 13-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը*
Պարտադիր վճարներ	7,390,093	5,919,336
Կամավոր նվիրատվություններ	94,839	94,321
Ընդամենը եկամուտներ նվիրաբերություններից	**7,484,932**	**6,013,657**

9. Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր

Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսը ըստ ֆինանսական գործիքների ներկայացված է ստորև.

	Ծան.	*Փուլ 1*	*Ընդամենը*
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	5	106,274	**106,274**
Ներդրումներ պետական արժեթղթերում	6	16,255	**16,255**
Ընդամենը ակնկալվող վարկային կորուստների գծով ծախսեր		**122,529**	**122,529**

10. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ և գործառնական ռիսկեր

Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու կարգավորման հայեցակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը հիմնականում կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Հիմնադրամի կայունության ապահովման համար:

Դատական հայցեր գծով պայմանական պարտավորություններ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը իր բնականոն տնտեսական գործունեության ընթացքում չի ներգրավվել դատական գործընթացների մեջ: Ղեկավարության կարծիքով, չկան ընթացիկ դատական գործընթացներ, որոնք կարող էին որևէ կերպ ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական դրության կամ գործարքների արդյունքների վրա, և որոնք չեն հաշվարկվել կամ բացահայտվել այս ֆինանսական հաշվետվություններում:

11. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցները և պարտավորությունները հատուցումների գծով:

Հիմնական ռիսկերը, կապված Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը, իրացվելիության ռիսկը: Իրականացվում է վերահսկողություն ներքոհիշյալ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որոնք ամփոփված են ստորև:

(*հազար ՀՀ դրամ*)

11. Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Հիմնադրամի զուտ ակտիվների զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Զուտ ակտիվների զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Զուտ ակտիվների ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

	2018թ.	
Արժույթ	*Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.*	*Ազդեցությունը սեփական կապիտալի վրա*
ՀՀ դրամ	+100	(157,889)
ՀՀ դրամ	-80	43,075

Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է շարունակական վերահսկողություն մնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից:

Մինչև մարման ժամկետը մնացած ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը

Ստորև ներկայացվում է 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվետու ամսաթվից մինչև չզեղչված պարտավորությունների պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն:

Ֆինանսական պարտավորություններ 2018թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ	*մինչև 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Պարտավորություններ հատուցումների գծով	99,130	317,646	2,085,373	5,461,558	7,963,707
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**99,130**	**317,646**	**2,085,373**	**5,461,558**	**7,963,707**

Ֆինանսական պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ	*մինչև 3 ամիս*	*3-ից 12 ամիս*	*1-ից 5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*
Պարտավորություններ հատուցումների գծով	24,150	72,450	482,800	1,292,700	1,872,100
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**24,150**	**72,450**	**482,800**	**1,292,700**	**1,872,100**

Վարկային ռիսկ

Հիմնադրամի Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները պահվում են Հայաստանի բարձր համբավ ունեցող բանկերում: 2018թ.հունվարի 1-ի և 2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգված են եղել Փուլ 1-ում՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

(*հազար ՀՀ դրամ*)

12. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցների և հատուցումների գծով պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են իրենց հաշվեկշռային արժեքներին:

Հիմնադրամն օգտագործում է հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատման մեթոդով որոշելու և բացահայտելու համար.

- 1-ին մակարդակ. Ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվների և պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գինը,
- 2-րդ մակարդակ. Մեթոդներ, որոնցում իրական արժեքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող բոլոր փոփոխականները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են,
- 3-րդ մակարդակ. Մեթոդներ, որոնցում իրական արժեքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող բոլոր փոփոխականները հիմնված չեն դիտարկելի շուկայական տեղեկատվության վրա:

Իրական արժեքով պարբերական գնահատմամբ ֆինանսական գործիքների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

	31 *դեկտեմբերի* 2018թ.		31 *դեկտեմբերի* 2017թ.	
	Մակարդակ 2	*Ընդամենը*	*Մակարդակ 2*	*Ընդամենը*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ				
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
Ներդրումներ պետական արժեթղթերում	3,606,633	3,606,633	–	–
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**3,606,633**	**3,606,633**	**–**	**–**

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2018թ. ներկայացված է ստորև.

	Իրական արժեք	*Գնահատման մեթոդ*	*Օգտագործված ելակետային տվյալներ*
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
Ներդրումներ պետական արժեթղթերում	3,606,633	ՋԴՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**3,606,633**		

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան՝ գնահատված այն արժեքով, որը մոտարկում է դրանց իրական արժեքը 2018 և 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 *դեկտեմբերի* 2018թ.			31 *դեկտեմբերի* 2017թ.		
	Մակարդակ 2	*Մակարդակ 3*	*Հաշվեկշռային արժեք*	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Հաշվեկշռային արժեք*
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է						
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցների	8,297,083	–	9,914,668	5,783,537	–	5,783,537
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է						
Պարտավորություններ հատուցումների գծով	–	3,457,725	3,457,725	–	778,473	778,473

(*հազար ՀՀ դրամ*)

13. Կապակցված կողմերի բացահայտումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում ներդրված միջոցների

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ունի ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներ 46,842 հազ. դրամի չափով (2017թ.՝ 1,195,801 հազ. դրամ):

Եկամուտ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից

2018թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Հիմնադրամը ստացել է տոկոսային եկամուտ ՀՀ կենտրոնական բանկում ներդրված միջոցներից 48,243 հազ. դրամի չափով (2017թ.՝ 83,373 հազ. դրամ):